ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 70-Ն | *Տեսակը* | Հիմնական |
| *Տիպը* | Հրաման | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | Միասնական կայք 2022.10.31-2022.11.13 Պաշտոնական հրապարակման օրը 31.10.2022 | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | Առողջապահության նախարար | *Ընդունման ամսաթիվը* | 19.10.2022 |
| *Ստորագրող մարմինը* | Առողջապահության նախարար | *Ստորագրման ամսաթիվը* | 19.10.2022 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 10.11.2022 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

**Կապեր այլ փաստաթղթերի հետ**

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՈՆՈՐԻ ԵՎ ԴՈՆՈՐԱԿԱՆ ՍԱՂՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

19 հոկտեմբերի 2022 թ. N 70-Ն

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՈՆՈՐԻ ԵՎ ԴՈՆՈՐԱԿԱՆ ՍԱՂՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետը, 12-րդ հոդվածի 1-ին մասը,

***Հրամայում եմ***

1. Հաստատել՝
1 ) Վերարտադրողականության դոնորի վերաբերյալ գրանցամատյանի ձևը, համաձայն հավելված N 1-ի:
2) Դոնորական սաղմերի վերաբերյալ գրանցամատյանի ձևը, համաձայն հավելված N 2-ի:
2. Սույն հրամանով հաստատված գրանցամատյանները լրացվում են էլեկտրոնային եղանակով՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների կողմից, ընդ որում
1) հավելված 1-ով հաստատված գրանցամատյանը լրացվում է ինքնաշխատ եղանակով՝ վերարտադրողականության դոնորի վերաբերյալ էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքագրված տեղեկատվության հիման վրա,
2) հավելված 2-ով հաստատված գրանցամատյանը լրացվում է բժշկական կազմակերպության կողմից դոնորական սաղմի տնօրինումը ստանձնելուց հետո՝ ծածկագրավորված սաղմի կենսաբանական ծնողների (վերարտադրողականության դոնորների), ռեցիպիենտների, սաղմերի վերաբերյալ էլեկտրոնային առողջապահության համակարգ ամբողջական տեղեկատվությունը ներբեռնելու միջոցով:
3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

**Ա. Ավանեսյան**

**Հավելված N 1**
**Առողջապահության նախարարի**
**«19» հոկտեմբեր 2022 թ.**
**N 70-Ն հրամանի**

**Ձև**

**Վերարտադրողականության դոնորի վերաբերյալ գրանցամատյանի**

| Վերարտադրողականության դոնորի վերաբերյալ տեղեկատվություն | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Վերարտա-դրողակա-նության դոնորի կոդ | Վերարտա-դրողակա-նության դոնորի ՀԾՀ-ի վերջին թիվ | Սեռ | 1 ամսվա ընթացքում սերմի հանձնման քանակ | Ակտիվ դոնոր հանդիսանալու ժամանակա-հատված | Ձվաբջիջների արտածծման քանակ | Ստացված սեռաբջիջների քանակ | Ծնված երեխաների թիվ |
| | | իգական | | | | | |
| | | արական | | | | | |

**Հավելված N 2**
**Առողջապահության նախարարի**
**«19» հոկտեմբեր 2022 թ.**
**N 70-Ն հրամանի**

**Ձև**

**Դոնորական սաղմերի վերաբերյալ գրանցամատյանի**

| Դոնորական սաղմի (երի) դոնորների ծածկագրեր | Դոնորական սաղմի(երի) ծածկագիր | Դոնորական սաղմի (երի) տրամադրման համաձայնու-թյան ձևի ամսաթիվ | Սառեցման միջավայր | Դոնորական սաղմի/երի փորձանոթի համար | Ռեցիպիենտի (ների) ծածկագիր | Դոնորական սաղմի (երի) ապասառեցման ամսաթիվ | Դոնորական սաղմի(երի) ներպա-տվաստման ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Կին_____<br>Տղամարդ__ | 1. | | 1. | 1. | Կին____<br>Տղամարդ___ | 1. | 1. |
| | 2. | | 2. | 2. | | 2. | 2. |
| | 3. | | 3. | 3. | | 3. | 3. |
| | 4. | | 4. | 4. | | 4. | 4. |
| | 5. | | 5. | 5. | | 5. | 5. |
| | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 6. | | 6. | 6. | | 6. | 6. |

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 31 հոկտեմբերի 2022 թվական:**